

ԱԼԵՔՍԱՆԴՐ ՔԱԼԱՆԹԱՐԸ ԵՎ ԱՐԵՎՍՏԱՅԱՅՈՒԹՅԱՆ ՀԱՐՅՈՒՆ

Հ. Մ. ՄՈՒՍԵՍՅԱՆ

ՀՀ Գիտությունների ազգային
ակադեմիայի պատմության ինստիտուտի հայցորդ

Ալեքսանդր Քալանթարի խմբագրության տարիներին «Մշակի» էջերում առանձնակի տեղ էին գրավում արևմտահայերի ջարդերին, չարքաշ ապրելակերպին վերաբերող վերլուծական հոդվածները: Նշենք, որ երբ 1880-ական թթ. կարգավորվեցին Ռուսաստանի և Թուրքիայի հարաբերությունները, արգելքի տակ դրվեց Հայկական հարցի վերաբերյալ յուրաքանչյուր գրավոր ելույթ: Արժրուհին համոզվեց, որ այլևս անհնարին է գրել Արևմտյան Հայաստանի մասին: Սակայն Արժրուհու մահից հետո «Մշակի» նոր խմբագրությունը հարմար առիթը բաց չէր թողնում՝ անդրադառնալու Արևմտյան Հայաստանին, լուսաբանելու տեղի ժողովրդի վիճակը: Այս հարցում «Մշակն» ուներ սթափ դիրքորոշում և չէր հավատում բարենորոգչական որևէ ձեռնարկի:

1894թ. թուրքական կառավարության հայահալած քաղաքականության հետևանքով Սասունում բռնկվեց ապստամբություն: 1894թ. Սասունի դեպքերին Քալանթարը անդրադարձել է մանրամասնորեն: Հետագայում այդ հոդվածները հրատարակվեցին առանձին գրքույկով՝ «Սասունը» վերնագրով: Նա վերլուծում է թուրքահպատակ այդ շրջանի տնտեսակարգը, հայերի անտանցի վիճակը: «Օրինական և ոչ օրինական հարկերը Սասունում» հոդվածից տեղեկանում ենք, որ մինչև սուլթան Սահմուդի բարենորոգումները Թուրքիան ավատական կարգերով կառավարվող երկիր էր, այն բաժանվում էր բեկերի, աղաների և շեյխերի միջև: Նրանցից յուրաքանչյուրը առնում էր իր սահմանում գտնվող ժողովրդից այնքան հարկ, ինչքան կարողանում էր: Դրա մի մասը տալիս էր կառավարությանը կամ չէր տալիս: Ժողովուրդը անտեղյակ էր դրան: Կենտրոնական կառավարության ու ժողովրդի միջև ուղղակի շփում չկար:¹ Նկարագրելով Սասունի հայերի ծանր վիճակն ու քրդերի կողմից նրանց հարստահարումները, Ալ. Քալանթարը գրում է. «Սասունի գյուղերի ներկայացուցիչները փորձեցին միջոց գտնել նոր բարդվող տուրքերից խուսափելու համար: Սակայն նրանց առաջարկությունները դիտվեցին որպես ըմբոստության նշան, իբրև անհնազանդության արտահայտություն: Քրդերը հաճախ էին կռվում հայ հովիվների հետ: Հերթական բախումից հետո, երբ հայերը հաջող դիմադրեցին, քրդերը հետ քաշվեցին, թուրք կառավարությունը քրդերի հետ համաձայնեցված վճռական քայլերի գնաց...գործի գալն անակնկալ էր Սասունի ժողովրդի համար, որ շվարած տեսնում էր ինչ-որ գաղտնի պատրաստություն իր շուրջը: Ավելի մեծ եղավ զարմանքը, երբ ականատեսն էր փաշայի և քրդերի ամենասերտ հաղորդակցությանը: Քրդերը զենք ու փամփուշտներ էին ստանում զինվորներից: Հասկանալի էր՝ իշխանությունը միացել էր ժողովրդի մի մասի հետ՝ մյուսին ճնշելու համար: Սասունցիները որոշել էին ընդհարումի ոչ մի առիթ չտալ, իսկ եթե ընդհարում լինի,

¹ «Մշակ», 1895, N 9:

կռվելու էին մինչև արյան վերջին կաթիլը: Քրդերը երկար սպասեցին ու առիթը իրենք ստեղծեցին, որով և սկսվեց այն կատաղի կոտորածը, որի հառաչանքները հասան աշխարհի ծայրերը: Մեծ քաջություն ցուցաբերեց սասունցին»:²

Քալանթարը 1895թ. գրած «Նամակ Գերմանիայից» հոդվածում անարգանքի սյունին է գամում մեծ տերությունների քաղաքականությունը Հայկական հարցի նկատմամբ: Հետաքրքիր է Ալ. Քալանթարի՝ «Ինքնավարական հարցեր» առաջնորդողը, ուր նա դնում է Արևմտյան Հայաստանում ինքնավարության անհրաժեշտության խնդիրը: Խոսելով ինքնավարության մասին՝ Քալանթարը առաջ է քաշում հետևյալը. «Եթե Թուրքիան իր ընդհանուր կյանքով, իր վարչական կարգերով կարողություն տար Թուրքիայում ապրող մի քաղաքացու առաջ գնալ, ինչպես հնարավորություն ունի առաջ գնալ եվրոպական երկիրներում եղող ամեն մի անհատ, այն ժամանակ հայերի պահանջների մեծագույն մասն էլ բավարարություն ստացած կլինեն և հարց չէր ծագի առանձին կազմակերպության մասին: Այդպիսի գործի գլխավոր էությունը առանձին ինքնավարական մարմին կազմելու մեջ չէ, այլ քաղաքացիական պահանջների այն որոշ քանակի մեջ, որ անհրաժեշտ է մի ժողովրդի ազատ և կատարելագործված զարգացման համար....Եթե դուք այնպիսի կարգեր սահմանեիք, որ հայը ազատորեն կարող կլինի թե՛ տնտեսապես, թե՛ բարոյապես և հասարակական տեսակետով առաջադիմել Թուրքիայում, անկասկած դրանով կլուծեք այն հարցը, որ դրված է Թուրքիայի առաջ և տարիների ընթացքում և մինչև այժմ չի ստացել իր լուծումը, բայց նա չէ կարող չլուծված մնալ, և նա պետք է վերջապես լուծվի»:³

Ալ. Քալանթարը իր՝ 1909թ հոդվածներում բազմիցս անդրադարձել է երիտթուրքերի կազմակերպած Ադանայի սոսկալի ջարդերին և արևմտահայերին: Նա այդ հոդվածներում մեկ հույսը դնում է Եվրոպական տերությունների օգնության վրա, մեկ քննադատում նրանց իրենց թողտվական և անտարբեր քաղաքականության համար դեպի թուրք ջարդարանների գործողությունները: 1909թ. N 73-ում նա գրում է. «Ամբուժելի կսկիծ և վրդովմունք են պատճառում հայկական ջարդերի մասին հեռագրական լուրերը: Ադանայի, Ալեքսանդրիայի, Մերսինի շրջանում բռնկված ֆանատիկոսական խառնակությունները մի անգամ ևս գալիս են հիշեցնելու, որ Մերձավոր Արևելքը դեռևս սնում է իր մեջ և քաջալերում վայրենի, հակակուլտուրական բնագոյներ... բայց միևնույն ժամանակ ֆանատիկոսության այդ անգուսպ բռնկման երևույթները ասպարեզի վրա են դնում մի էական հարց, մի՞թե չպիտի որոնել մի այնպիսի միջոց, որ առ միշտ վերացներ ջարդեր անելու ծրագիրները և վերջ դնեք վայրենի բնագոյների արտահայտությանը»: Այնուհետև Քալանթարը մեղքը բարդելով վայրենի խուժանի վրա, կարծես չի ընթերցում երիտթուրքերի մեղքը և նրա հեռուն գնացող նպատակները, նա գրում է. «Անշուշտ թուրք երիտասարդության լուսավոր և քաղաքակիրթ մասը համակիր չէ խուժանի վայրենությունների բորբոքմանը և արտահայտությանը, բայց նա կարող է միայն այն ժամանակ երկիրը ազատել (եվրոպական) միջատությունից, երբ բավականաչափ քաղաքական և պետական հեղինակություն կունենա զսպելու իր ֆանատիկոսներին և ապահովելու յուրաքանչյուր քաղա-

² Ալ.Քալանթար, «Սասուն», Թիֆլիս, 1895, էջ 79:

³ «Աշակ», 1906, N 8:

քացու կյանքը պետության մեջ»:⁴ Այնուհետև N 81-ում նա, խոսելով հայ պանդուխտների՝ հայրենիք վերադառնալու և թուրքական կառավարության կողմից ընդունված սահմանադրության մասին, գրում է. «Կ.Պոլսի ծանրակշիռ դեպքերը, Թուրքիայի զանազան տեղերում բռնկված անկարգությունները և սարսափները հանգեցրին թուրքահայ պանդուխտների վերադարձը դեպի հայրենիք... և մենք տարիներ շարունակ թելադրել էինք թուրքահայերին վերադառնալ իր հայրենիք, իսկ օսմանյան սահմանադրության հրապարակումից հետո ամենաեռանդուն հորդորներն էինք կարդացել այդ վերադարձի անհրաժեշտության մասին, ստիպված ենք ժամանակ առ ժամանակ ձեռնպահ մնալ այդ հորդորների վերաբերությամբ, որովհետև Կ.Պոլսի դեպքերը անակնկալ արտահայտություններ էին ստանում և տեղի էին ունենում ճակատագրական եղելություններ, իսկ ջարդերի անհայտացած ստուները նորից սև շղարշներ էին տարածում այս և այն վայրերում... Եթե վերականգնված օսմանյան սահմանադրությունը և նրա նոր գահակալը ապահովեին պետական բարեկեցությունը և առաջն առնեն ջարդերի և անկարգությունների, նրանք ասպարեզ կբանան ժողովրդի ինքնագործունեության և ինքնաբուժիչ ստեղծագործ աշխատանքի համար: Միայն թե շուտ, որքան հնարավոր է շուտ գար այդ բարեկեցության շրջանը»:⁵ Եթե վերը նշված հոդվածներում Քալանթարը չէր շտապում մեղադրել երիտասարդ թուրքերին և դեռևս հույսեր էր փայփայում թուրքերի ընդունած սահմանադրության նկատմամբ, ապա «Արդյոք ընդունակ կլինեն» հոդվածում նա, խոսելով Մերձավոր Արևելքում և Թուրքիայում եվրոպական քաղաքականության, Թուրքական հեղաշրջման և Ադանայի կոտորածների մասին, գալիս է այն եզրահանգման, որ Ադանայի սարսափելի ջարդերը և ավերածությունները վկա են այն բանին, որ վստահություն չի կարելի տածել դեպի թուրքական գործողությունները, և որ բարբարոս ձեռքը, ինչպես և դարեր առաջ, պատրաստ է արյունի և ավերակների մեջ թաղել ամեն մի կուլտուրական գործ և նախաձեռնություն»:⁶ Այնուհետև «Թուրքահայերը և Թուրքիան» հոդվածում Քալանթարը գիտակցելով, որ Թուրքիայում ամենևին էլ հայ ժողովրդին լավ ճակատագիր չի սպասվում՝ շրջահայեցության կոչ էր անում հայ գործիչներին և արևմտահայերին, գրելով՝ «Անշուշտ շատ փափկանկատ է դարձել Թուրքիայի քրիստոնյաների և մանավանդ հայերի դրությունը: Հայկական գործողները չպետք է չափազանց լուրջ վերաբերվեն ընթացող քաղաքական դեպքերին և ամեն միջոց գործ դնեն, որպեսզի նորանոր զոհեր չտան, այն անցողական երկար շրջանին, որի մեջ նրանք ապրում են: Ֆանատիկոսական և բարբարոսական բնագղներով օժտված տարրերի մեջ ապրող թուրքահայ ժողովուրդը պետք է կշռի այն միջոցները և չափի այն քայլերը, որոնցով նա մտադիր է դեկավարվել այս ծանր պատմական ժամանակաշրջանում»:⁷ 1912-1913թթ. Հայկական հարցի վերաբացման շրջանում Քալանթարը բազմիցս անդրադարձել է այդ հարցին և մեծ տերությունների քաղաքականությանը («Հայկական հարցի բնավորությունը», «Վեհաժողովի կոտորակները», «Առասպելների ան-

⁴ «Մշակ», 1909, N 73:

⁵ «Մշակ», 1909, N 81:

⁶ «Մշակ», 1909, N 83:

⁷ «Մշակ», 1909, N 104:

կումը» վերտառությամբ հոդվածներ): Հետաքրքրական է Քալանթարի՝ «Առասպելների անկումը» հոդվածը, որտեղ նա այլևս հավատ չընծայելով մեծ տերությունների կայացրած որոշումներին Հայկական հարցի նկատմամբ, գրում է. «... հայերի ամենաթույլ ակնարկները բարենորոգումների մասին նկատվում էին իբրև ըմբոստ անջատական հավակնություն, իսկ այսօր նրանք մկրտվում են չափավոր և տարրական անուններով: Դավադրական առասպելները սկսում են կորցնել իրանց գոյության պատվանդանները: Բայց զոհե այժմ, երբ առասպելների բարոյական սնանկությունը պարզվել է և տառապող ժողովրդի աղաղակը հարգանքի է արժանացել, այո՛, այժմ, բոլոր ողբերգություններից հետո, հարթված է լինելու արդյոք բարենորոգումների իրականացման ճանապարհը, առանց նոր զոհերի և առանց ճակատագրական թյուրիմացությունների»:⁸ Քալանթարը իր՝ «Ինքնապաշտպանության բնութիւնը» հոդվածում, խոսելով ինքնապաշտպանության էության մասին, նշում է, որ ինքնապաշտպանության գաղափարները չպետք է ընդարձակել դեպի ազգային սրբազան դրոշակի պարզում և ծածանում: Դա ոչ մի օգուտ չբերելով հանդերձ, կբերի մեծ վնաս, կասկածներ ծնելով այն շրջանների մեջ, որոնց համար հենց այդպիսի առիթներ են հարկավոր ջարդեր և կոտորածներ առաջացնելու համար: Արևմտահայերի ինքնապաշտպանությունը պետք է ըմբռնել միայն իր հասարակ, տարրական գաղափարներով, այլապես այն կմնա անիրագործելի:⁹

Քալանթարը ներկայացրել է նաև արևմտահայերի տնտեսական և հասարակական ծանր վիճակը Օսմանյան կայսրությունում: Թուրքիայի հայահալած գործունեությանը նա անդրադառնում է 1898թ. Տիկին Ռամզեի «Ամենօրյա կյանքը Թուրքիայում» գրքի գրախոսականում: 1906թ. «Սահմանից այն կողմ» հոդվածում Քալանթարը գրում է. «Հայկական շրջաններում հասարակական կյանք փոքր ի շատե գոյություն չունի... դպրոցական կյանքը մեծ առաջադիմություն չէ անում որակական կողմից, բայց դպրոցներ կան և գրագիտության ուսուցումը առաջ է գնում: Գրքեր և լրագիրներ միայն այն չափով են հասնում ազգաբնակչությանը, որքան կարող է հայթայթել Պոլիսը, իսկ մնացած Հայկական գրականությունը մուտք չունի Փոքր Ասիայի մեջ»: Նա այս հոդվածում խոսում է նաև քրդերի կողմից հայերի հարստահարությունների մասին՝ գրելով. «Կառավարության վերաբերմունքը դեպի քրդերը շարունակում է մնալ մտերմական, այդպիսի պայմաններում հայ երկրագործ ժողովուրդը պահպանում է իր գոյությունը մշտական երկյուղի և սպառնալիքների տակ»:¹⁰ 1908թ. «Կարոտեալ թուրքահայը» հոդվածում Քալանթարը ներկայացնում է արևմտահայերի ծանր վիճակը պատրիարքարանից ստացած տեղեկությունների հիման վրա: Նա գրում է. «Թուրքահայ գավառական ժողովուրդը կարոտության մեջ է, որը պետք ունի կողմնակի նպաստի, որը պետք է հայթայթե նրան ուսելու հաց և ցանելու սերմացու: Թուրքահայ ժողովրդի մեջ գործող անձինք պետք է հոգատար լինեն, որ տեղական գյուղացին կարող լինի մշակել և ցանել իր հողը, որպեսզի առաջիկա տարվա համար նա ապահովված լինի իր կյանքը զոհե այն չափով, որքան նա կախված է

⁸ «Մշակ», 1913, N 128:

⁹ «Մշակ», 1913, N 129:

¹⁰ «Մշակ», 1906, N 23:

երկրագործությունից...»:¹¹ 1913թ. «Քուրդական շարժումներ» հոդվածից տեղեկանում ենք. «... Սղերդը, որ քրդական համախմբումների և փոխադարձ շփումների խոշոր կենտրոնն է, ամեն օր նորանոր երկյուղներ է ներշնչում տեղական ժողովրդին: Անակնկալների տանջող ուրվականը հուսահատության որոշումներ է թելադրում մասսային, և ահա մենք տեսնում ենք, որ գարնանային օրերում, երբ երկրագործը պետք է իր բոլոր ույժով և եռանդով ձեռք գարկի իր տարվա աշխատանքին և արդյունաբերական գործունեության, նա վերցնում է գաղթականի մահակը և հեռու երկրներ փախչելու վճիռներ կայացնում: Տխուր է վիճակը»:¹²

Այսպիսով, Ալ. Քալանթարը բազմիցս անդրադարձել է արևմտահայությանը և մտահոգվել նրա ճակատագրով:

АЛЕКСАНДР КАЛАНТАР И ВОПРОС ЗАПАДНЫХ АРМЯН

Е. М. МУСЕСЯН

В пределах "Мшак" Александр Калантар периодически касался вопросов западных армян. Он является автором многих статей, которые касаются Армянского вопроса, ужасной резни в Адане, ужасной жизнедеятельности западных армян. Он печатал статьи, посвященные Сасуну и Сасунскому бунту в 1984 году. Позднее эти статьи напечатались одной книжкой оглавленным Сасун. Интерес представляют статьи Александра Калантара- Вопросы автономии, Турция и армяне Турции, За пределами границы.

ALEXANDR KALANTAR AND ARMENIAN QUESTION

H. M. MUSESYAN

In the borders of Mshak Alexandr Kalantar touched upon a question of Western Armenian from time to time. He is the author of many articles which are connected to the Armenian question, grateful massacre of Adana and the hard living condition of Western Armenians. He published articles devoted to Sasun and the riot of Sasun in 1894. Then these articles were published in a book which was called Sasun. The sovereign question of Kalantar, Turkish Armenians and the article outside the border of Turkey are very interesting.

¹¹ «Մշակ», 1908, N 44:

¹² «Մշակ», 1913, N 111: